ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 1 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղ. Ռուբեն Թորոսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Ռուբեն Թորոսյանը 19.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սույն անհատական դիմումի քննությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Դիմողի կողմից պահպանված չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քաղաքացիների անհատական դիմումների

ընդունելիության պարտադիր պայմանները: Մասնավորապես, սահմանադրական դատարան անհատական դիմում կարող է ներկայացնել **ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած** ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Սույն անհատական դիմումից ակնհայտորեն բխում է, որ դիմողը որևէ իրավասու դատական մարմնում դատավարության մասնակից չի հանդիսացել, իսկ այդ հանգամանքն ինքնաբերաբար նշանակում է նաև մատնանշված օրենքով սահմանված՝ դիմումների ընդունելիության մյուս այլ պարտադիր պայմանների իսպառ բացակայություն:

Դատական կազմն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Բացի դրանից, անհատական դիմումի հիման վրա վիճարկման ենթակա չէ սահմանադրական դատարանի կողմից կիրառված օրենքի սահմանադրականությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման 7-րդ կետ/:

Ի դեպ, ՀՀ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմի 05.02.2010թ. որոշմամբ գործի քննությունը մերժելիս վկայակոչվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 1-ին և 7-րդ կետերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 մարտի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-8